

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք գիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Миръ“

ՄԵԼԻԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի ջրանցքը:—Ներքին տեսու-
թիւնը, Նամակ Նուխուց: Նամակ խմբագրի-
նը: Ներքին լուրեր:—Արտաքին տեսու-
թիւնը: Ունեւորութիւն:—Արտաքին լուրեր:—
Ստաւրոպոլիս:—Յայտարարութիւններ:—Տեղե-
կացոյց:—Բանասիրական: Մարդը գոյու-
թեան կուր: մէջ:

ԹԻՖԼԻՍԻ ՋՐԱՆՑԵՐԸ

Այս օրերս Թիֆլիսի Դումայի
մէջ վճիռ կայացաւ, որի զօրու-
թեամբ նշանակվում է մօտ տասն
և վեց հազար ռուբլ գումարը
քաղաքիս պլանը կազմելու և
ջրանցք կառուցանելու համար
նախնական հետախուզութիւններ
անելու նպատակով:

Այդ խնդիրը վաղուց է որ յա-
րուցված է եղել թէ Դումայի
մէջ և թէ այժմեան քաղաքային
խնայարարութեան մոցնելուց ա-
ռաջ այն ժամանակի ձայնաւոր-
ների ընդհանուր ժողովի մէջ, բայց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՐԿԻ ԿՈՑՈՒԹԵԱՆ ԿՈՒՒԻ ՍԵՋ

Դ.

Մրցութեան բաղմատեսակութիւնը գոյութեան
կուրի մէջ մարդկային առանձին խումբերում:—
Մարմնակազմական (СОМАТИЧЕСКИЙ) պատճառ-
ների ազդեցութիւնը:—Մտաւոր և բարոյական
զօրութեան դերը:—Գիտարութիւնը վճռելու
մի քանի խոշոր հարցեր հասարակական բարոյա-
կանութեան:

Մարդերի մէջ, որպէս ուրիշ ընկերական ա-
նասունների մէջ, հասարակական կեանքը յառաջ
է բերում նշանաւոր ազդեցութիւն գոյութեան
կուրի յայտնվելու և նրա զօրութեանը:—Մտաւոր
վրա: Հասարակական կեանքի մի քանի պայ-
մաններում, մրցութիւնը առանձին առանձինների
մէջ կարող է բաւական թուլանալ, կամ բոլորով
միջոցով զարգանալ:—Բայց մարդկային հասարակու-
թեան առանձին խումբերի մէջ—ազդերի և ցեղե-
րի մէջ—միայն միայն նախանշելով, մրցու-
թիւնը միշտ և միշտ ստատականում է: Այն
փաստը, թէ մարդը է իր յարաբերութիւնների
մէջ հասարակական էակ, որ նա, ինչ և լինէր,
պէտք է որ միանայ մեծ կամ փոքր հասարակու-
թիւնների հետ:—Այսինքն նրա մէջ մի տեսակ
զինդութիւն, մի տեսակ ընդունակութիւն, մի
յայտնի չափով զոհել իր անձնական շահերը յօ-
գուտ ընդհանրութեան այն շրջանի, որի մէջ
ինքն ապրում է: Դրա մէջ չէ կայ ոչինչ, որ
բացառապէս միայն մարդուն յատուկ լինէր, որ-
պէս մտածում է Շեֆֆը: Հատ անասունների
մէջ հասարակականութիւնը զարգացած է ան-
համեմատ մեծ չափով: Չը խօսելով միջատների

երբեք ոչ մի վճիռն էին հաս-
նում:

Դումայի վերջին վճիռը առա-
ջին քայլ է դեպի ջրանցքի իրա-
զործելը:

Բայց այնու ամենայնիւ կան
թերահաւատներ, որոնք կարծում
են, որ Դումայի նշանակված
գումարը չէ բաւականանայ քա-
ղաքիս պլանը կազմելու և նախ-
նական հետախուզութիւններ ա-
նելու համար: Հատերը կարծում
են, որ Ուպրավան պահանջեց այդ
գումարը Դումայից միայն նրա
համաձայնութիւնը սկզբունքի մէջ
ստանալու նպատակով, բայց որ
հետզհետեւ աւելացնելու է իր պա-
հանջը:

Մենք այն թերահաւատների
թիւին չենք պատկանում և կար-
ծում ենք որ Դուման նշանաւոր
քայլ է արել դեպի ջրանցքի ի-
րագործելը, նշանակելով վերոյի-
շեալ գումարը, բայց մի և նոյն

մասին, որոնց մօտ կազմվել են առանձին գոր-
ծարաններ հասարակական նպատակների համար
և որոնց մէջ անհատները շատ անգամ զոհվում
են հասարակութեանը:—Կան շատ ստոր անա-
տուներ, որոնց մէջ անհատը ամբողջապէս կը-
լանվում է ընդհանրութեանը և ինչու է մին-
չև հասարակ գործարանի աստիճան, իսկ մեր
այժմեան ժամանակի մարդկութեան մէջ և ի-
րանց գաղափարների համեմատ ապագայի վե-
րաբերութեամբ, անձերը միշտ պահպանում են
իրանց անհատականութիւնը, և միայն մի յայտ-
նի աստիճան ենթարկվում են հասարակու-
թեանը: Մի ամբողջ շարք բարոյական պրին-
ցիպների հիմնվում են իսկապէս այդ հայեցո-
ղական կէտի վրա: Բայց այն ժամանակ, երբ
բոլոր անասունների մէջ հասարակական ընդ-
դունելը երբեք չեն տարածվում մի և նոյն
տեսակի բոլոր անդամների մէջ» (Գարբիլի),
ընդհանրապէս, մարդերի մէջ գոնէ կայ ձեռ-
տու միացնել ամբողջ մարդկութիւնը և կազ-
մել մի մեծ ժողովուրդ: Թէ որպիսի ուղղութիւն
կը ստանար գոյութեան կուրը այդ նպատակին
հասնելու ժամանակ, մենք տակաւին չը գի-
տենք: Մեր կարծիքով, այժմ պէտք է թողնել
այդ հարցը, որովհետեւ մեր գլխաւոր նպատակը
է այն, որ, որքան կարելի է, ուսումնասիրենք
մի քանի ընդհանուր կողմերը այժմ կատարվող
մրցութիւնների հասարակութեան զանազան
խումբերի մէջ:

Թէ այս մրցութիւնը է մի երկույթ, չափա-
զանց ամուր կերպով կապված մարդկութեան
կարիքների հետ:—Ինքն ըստ ինքեան յայտնի է:
Արդիւնաբերող հասարակութիւնների վերաբե-
րութեամբ դա արտայայտվում է Մուսկուսի հե-
տեւալ խօսքերով: «Եթէ արդիւնաբերող դասի
զանազան բաժինների մէջ, աշխատանքը, Լաս-
տալի առաջարկութեան համեմատ, ընկերաբար
(ассоциационно) կազմակերպվէր որոշեալ շրջաննե-
րի մէջ, այն ժամանակ առանձին ֆաբրիկաների
մրցութեան տեղ կը յայտնվէին առանձին ընկե-
րութիւնների մրցութիւնները: Միթէ չէր կարող
պատահել, որ, որ և ինչ ընկերութիւն, իր լաւ յատ-
կութիւնների պատճառով, կամ մշակող ուժերի
լաւ կազմակերպութեան պատճառով, և կամ ու-

ժամանակ թոյլ կը տանք մեզ
նկատել որ հազիւ թէ որ և է
բաւականացուցիչ հետեւանքի կը
հասնենք, եթէ պլանը կազմելու
և հետազոտութիւնները անելու
գործը կը յանձնենք առաջին պա-
տահած տեղական ինժեներին....

Որքան էլ հմուտ լինի իր գործի
մէջ, այս կամ այն տեղական տես-
նիկը կամ ինժեները, բայց ջրանցք
չենելու նպատակով պատրաստա-
կան հետազոտութիւնները կատա-
րելապէս բաւականացուցիչ կեր-
պով կարող է անել միայն նա, որ
արդէն այդ գործում շատ անգամ
եղել է, ուրիշ տեղերում այդ տե-
սակ աշխատանքներ կատարել է,
ուրիշ քաղաքներում ջրանցքներ
կառուցել է:

Այդ պատճառով, մենք կար-
ծում ենք, որպէս զի Դումայից
նշանակված նշանաւոր գումարը
ի զօրը չը կորչի, Ուպրավան շատ
լաւ կանէր եթէ բերել տար ա-

րիշ բարեյաջող հանգամանքների պատճառով,
կարգիւնաբերել իր մթերքը աւելի էժան, քան
թէ մի ուրիշ ընկերութիւն, ուրեմն նա կարող
կը լինէր զինք վաճառանոցի վրա իր արհես-
տագործութեան արդիւնքը աւելի ցած գնելով:
Եւ մթէն այն ընկերութիւնը, որ վարում էր իր
գործունէութիւնը աւելի անբարեյաջող պայման-
ների մէջ, չէր կարող այսպիսի դէպքում վնաս-
վել և մինչև անգամ ոչնչանալ, թողնելով իր ան-
դամներին կատարելաւ սնանկութեան մէջ»:

Մարդկային հասարակութիւնների մէջ գոյու-
թեան կուրը ուսումնասիրելու համար, մեզ հար-
կաւոր է բնականաբար մեր ուշադրութիւնը
կենտրոնացնել առանձին խումբերի ցեղական
յատկութիւնների վրա, որոնց մասին գիտու-
թիւնը ունի բաւականին փաստեր: Այսպէսով
մենք կը մօտենանք այն հարցին, թէ որպէս
ժողովուրդները մրցում են միմիայն միմե-
կան արտադրութեան մէջ:—Եւ միւսին իր տեղից,
կամ բոլորովին ոչնչացնում է:

Իր ճառի մէջ գոյութեան կուրի մասին մարդ-
կային սեռի մէջ, Էկիերը ընդարձակում է իր
դատողութիւնները և առանձին ժողովուրդների
մէջ կատարվող մրցութեան մասին: «Որքան մեծ
լինէր մեր ցեղակցութիւնը (տկար ցեղերի վե-
րաբերութեամբ)—ասում է նա—մենք պէտք է
այսուամենայնիւ հաշտվենք բնութեան օրէնք-
ների հետ, որք կից են ճակատագրական անհրա-
ժեշտութեան հետ, այն օրէնքները, որոնց հա-
մեմատ մի ցեղ, որը բարձր է իր հոգեկան և
մտաւորական յատկութիւններով, գոյութեան
կուրի մէջ յաղթում է և արտաքսում է ստոր
ցեղին» Աւելի որոշ կերպով նա արտայայտում
է իր միտքը իր ճառի վերջաբանութեան մէջ:
«Արեւի (ֆրանս-պրուսական) պատերազմը ցոյց
է տալիս մեզ, թէ ժողովուրդների պատմութիւնը
նոյնպէս հիմնվում է բնական օրէնքների վրա և
բաղկանում է մի շարք անպայման անհրաժե-
շտութիւններից, որոնց մէջ բարոյական և
մտաւոր զարգացումը միշտ գերակա
ուսումն է: Մի և նոյնը բովանդակվում է Շեֆ-
ֆի հետեւեալ խօսքերում: «Ջարգանքող քա-
ղաքակրթութիւնը—ասում է նա—տալիս է ա-

ռաջարկված աշխատանքը կատա-
րելու համար մի տեխնիկ կամ
մի ինժեներ (Ռուսաստանից, կամ
արտասահմանից, որ արդէն իր
պրակտիկայի մէջ շատ անգամ
կատարել է այդ տեսակ աշխա-
տանքներ, որ վարժ է այդ տեսակ
գործերում):

Ամենից յայտնի են այդ կողմից
Ինքիայի ինժեներները:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՒԹՈՒՑ

29 հոկտեմբերի

Չեմ յիշում, որ մեր պարբերական թերթերի
մէջ Նուխուց երբ և ինչ թղթակցութիւն եղած
լինի: Գոնէ հաստատ կարող եմ ասել, որ «Մա-
կի» մէջ վերջին երեք տարվայ ընթացքում
Նուխուց ամենին համակներ չեն եղել: Ուրեմն
ես, որովհետեւ առաջին անգամ յանձն եմ առ-
նում նամակագրի համեստ պաշտօնը, պէտք է
ըստ երկուքին մանրամասնաբար ծանօթաց-
նէի ընթերցողներին այս քաղաքի բնակիչներին,

մենաբարձր աստիճան զօրութիւն, որպէս ինք-
նապահպանութեան համար, նոյնպէս և յաղթու-
թեան համար, թէ կուրի մէջ բնութեան պայ-
մանների հետ, և թէ թշնամիների հետ նոյն իսկ
մարդկային սեռից»:

Դարվինը, որ աւելի մանրամասնաբար պա-
րագել է ցեղերի և ազգերի հարցով գոյութեան
կուրի մէջ, հասնում է այն եզրակացութեան,
թէ «քաղաքակրթութեան աստիճանը է, յատ-
կապէս, չափազանց նշանաւոր տարբերութիւն
գոյութիւնների յաղթութեան գործի մէջ» Եւ այդ
իսկ տարրի բովանդակութեան մասին նա յայտ-
նում է հետեւեալը: «Որքան և մութ է քաղա-
քակրթական զարգացման խնդիրը, այնքան
աւելի մենք կարող ենք նկատել, թէ մի ազգ,
որ երկար ժամանակ ընթացքում յառաջ է բե-
րել միշտ աւելի մեծ թուով բարձր մտաւոր զար-
գացում ունեցող, եռանդուն, քաջ, ազգասէր և
առաքինի մարդիկ,—այն ազգը առհասարակ կը
տիրապետէ սակաւ ձիրք ունեցող ազգերի վրա»:
Եւ աւելի ամբողջութեամբ ձևակերպում է նա
այդ միտքը հետեւեալ կերպով: «Լաւ ձիրք ու-
նեցող (տաղանդաւոր) մարդերի թուի բազմա-
նալը, և զարգացումը բարոյականութեան կա-
տարեալ չափով, կը տան անկասկած անսահման
գերազանցութիւն մի ցեղի միւս ցեղի վրա»:
Այստեղից հետեւում է թէ «որովհետեւ ամեն
ժամանակներում և բոլոր երկրի վրա զանազան
ցեղեր արտաքսում էին ուրիշ ցեղերին, և որովհե-
տեւ յաղթութեան գործի մէջ բարոյականու-
թիւնը իսպառում էր իսկական դերը, ուրեմն բա-
րոյականութեան հետ չափը ամեն տեղ ունի ձեռ-
տու մի գէպի բարձրը, և այն պատճառով լաւ
ձիրք ունեցող մարդերի թիւը պէտք է որ բազ-
մանայ»:

Ազգերի վիճակի փոխման մէջ, այսպիսի հո-
գեբանական սկզբնապատճառներն հետ, Դար-
վինը խոստովանվում է և իսկ—մարմնակազմա-
կան ուժերի սաստիկ ազդեցութիւնը գոյութեան
կուրի մէջ: Դրանով բացատրում է նա շատ
նախնական ազգերի ոչնչանալը, ցոյց տալով,
թէ անկութեան նուազելը և երեխաների հի-
ւանդութեան զօրանալը, այլ և չըլձապատող կեն-
սական պայմանների փոփոխութիւններին չը

սրանց ներքին, ընտանեկան կեանքի և երկրի պահանջների հետ, Բայց եւ, բազմաթիւ բերմամբ նոր այցելած լինելով քաղաքին, կողքի առայժմ մի թեթիւ հայեացք գցել թէ քաղաքի դիրքը, թէ բնակիչների և թէ սրանց պարսպունդների ու երկրի արդիւնաբերութիւնների վրա:

Նուիրն կամ, ինչպէս ասում են Շաքին, կատարելապէս պարսկական քաղաք է թէ իր արտաքին ձևով և թէ ներքին բնակիչների նիստ ու կացով: Երևակայեցէ՛ք ձեզ երեք հար, բարձրացած արևելքում, հիւսիսում և հարաւում: Այդ սարերի արանքում թէք տարածութեան վրա ընկած է քաղաքի որպէս թէ գեղեցիկ մասը և դրա շարունակութիւնը իջնում է դէպի ցած բաւական մեծ տարածութեամբ: Չիններից ու անձրեններից գոյացած հեղեղանման ջրերը, որոնք իջնում են սարերից, աղտոտ մուտք ունեն քաղաքի մէջ: Նրանք անցնում են համարեա ամեն մի փողոցի միջով և քարուքանդ անելով հողը, գոյացնում են անապատ խաւամաներ: Այդ խաւամանների միջով տարվայ ամեն ժամանակներում հոսում, անցնում են անսպասելի գետակներ: Պլանիւրովկա ասած բանը չը կայ Նուիրն ու փողոցների մէջ ուղղութիւն, ոչ աների մէջ ձև ու կանոն: Եթէ բնակիչների թիւը վեր առնենք 9 հազարի մօտ, այդ թիւի 1/3 մասը հազիւ հայեր լինեն: Մահմետականների գլխաւոր մասը սիւննի են, միւս փոքր մասը չէյի: Ուրեմն գտնվում են երկու անհայտ կրօնական կուսակցութիւններ, որոնցից մինը ընդունում է Մահմետի մասին եղած աւանդութիւնների գիրքը, իսկ միւսը — ոչ: Այդ երկու կուսակցութիւններից սիւննիները Գարսուսի 1877 թվ. ապրտմբութեան ժամանակ պաշտպան են հանդիսացել բարձրագոյն լեզուներին: *) իսկ միւսները իբրեւ հակառակ կրօնական կուսակցութիւն և իբրեւ հակառակ հայտաւ, ցոյց են տուել իրանց համակրութիւնը դէպի դուստը կառավարութիւնը: Եւ թողնում եմ նկարագրել պարսիկների թէ աղամարդերի և թէ կենսամասերի հագուստները: Պարսիկը թէ Ասիայի խորքերում լինի և թէ Եւրոպայի ամենալուսաւորեալ քաղաքներում:

*) Այդ ապտմբութեան մանրամասնութիւնների մասին եւ յոյս ունեւ պատմել մի ուրիշ անգամ «Գարձեալ իմ մի նոր ճանապարհորդութիւն» գրութեան մէջ:

յարմարվելը, — այդ բոլորը միշտ ունեցել են մահացուցիչ ազդեցութիւն ազգերի վրա:

Կարելի է դրական կերպով հաստատել, որ եւրոպացիների զանազան նախնական ժողովուրդների վրա ունեցած յաղթութեան մէջ խիստ մեծ դեր խաղացել են և խաղում են մարմնակազմական երեւոյթները: Շատ տեղերում նկատված է, որ եւրոպացիք խիստ հեշտ կերպով վարակում են վայրենիների տարաբնուի հիւանդութիւններով — և մինչև անգամ այդ դէպքերում, երբ իրանը չեն հիւանդանում: Այստեղ, ի հարկէ, եւրոպացիք յայտնվում են որպէս հիւանդութեան ակամայ փոխադրողներ, ճիշդ այնպէս, որպէս այդ նկատվում է բօխներին վերաբերութեամբ: Զանազան տեղերում արդէն կազմվել է հաստատ կարծիք, թէ օտարերկրեայ նաւերի այցելութիւնները ծառայում են որպէս աղբիւր հիւանդութիւնների տարածելու: Տարափոխիկ հիւանդութիւնների մէջ, առանձին մեծ դեր խաղում է ծաղիկ հիւանդութիւնը, որը խլում է շատ անկիրթ ժողովուրդներից մարդիկների անհաշիւ բազմութիւն: Ամերիկայում նրանից մեծան տեղային բնիկների համարեա կէսը: Եւրոպայի հիւանդութեան յայտնվելը միշտ սարսափ է ձգում անկիրթ ժողովուրդների մէջ, որոնք սկսում են փախչել, թողնելով իրանց հիւանդներին անխնամ, և միայն դնելով նրանց մօտ ջուր և կերակուր, Բայց չը նայելով դրան, հիւանդութիւնը հետևում է փախչողների ետևից, Ովկիանոսների շատ կղզիներում այդ հիւանդութիւնը ոչնչացրուց ամբողջ ցեղեր, ուր տարվել էր նա եւրոպացիներից:

Կեցութեան ձևերը փոխելու ժամանակ, նախնական ազգերը չափից դուրս ենթարկվում են խուճրի կամ պալարային հիւանդութեան: Գրանից կանխապէս մեռնում են մարդերի մեծ մասը, որոնք դուրս գալով իրանց կեանքի սկզբնական ձևերից, ընդունում են եւրոպական սովորութիւններ, օրինակ, կալմիկի ուսանող իշխանները, և այլն: Կալմիկների մէջ ծաղիկ հիւանդութիւնն նոյն ներգործութիւնն է անում, որպէս ուրիշ նախնական ազգերի մէջ, ուստաց ազդեցութեան ներքոյ, «Восточные Евреи» յուսումնաւոր հեղինակը, Իւ. Մեչնիկով, որպէս ա-

րում, ամենին չի համաձայնվի հրաժարվել իր սեփական, ամենին յայտնի, կեղտոտ հագուստներից: ամենասուրբութեամբ կը պահպանէ իր նախորդների սովորութիւնները թէ լաւ լինեն նրանք և թէ վատ: Եւ կը պատմեմ, թէ ինչպէս է հաջնվում այստեղ հայ — կիւնը, որովհետեւ նա, լինելով զանազան երկրներում, ունի իր առանձին, յատուկ հագուստը: Այդպէս է նա և Նուիրն: Առաջին անգամ, երբ պատահեց իր նախորդների փախչելիքը, զու նմանեցնում եւ տղամարդի բայց նրա գլխի փախչելիքը քեզ յիշեցնում են, թէ դա կին է լինելու: Կարմիր շապիկ տակից մի թղաչափ երևում է ժապաւէնաւոր վարտիկը: Շապիկի վրայից լինում է սովորաբար արխալուզը, կարած չերտաւոր շալից կամ հասարակ չըթից: Սրա վրա կապվում է մի լայն գոտի ծածկված արծաթեայ հին փողերով: Հագուստի այդ մասերն են, որ կնոջ նմանեցնում են առաջին տեսնելիս տղամարդի: Հակառակ կապվում է մի բարձր բամբինդ (ճակատանոց) զարդարած սուկնների շարքով: Այդ ճակատանոցի ու գլխի մէջ մնացած դատարկ տեղը զրկում է մի երկայն խողովակածն բան, կարած սովորաբար մետաքսից, որ ամբողջ է պոչ: Քիթը և բերանը փակվում է օշմարով, որ աղամարդից հետևեղած ժամանակ ցած է գցվում աղատորէն շունչ քաշելու համար: Աւելի պառաւ կինարմատների ակաճները, բացի սրանից, փակվում են եռանկիւնի կտորներով: Այդ բոլորից յետոյ գցվում է գլխի շալը, զանազան արժողութեամբ, նայելով հարուստ է թէ աղքատ է կինը: Ամենք թէ կին և թէ տղամարդ ոտքերին հագնում են մաշկներ, որոնք սովորական ոտնամաններ են պարսիկների համար:

Այսպիսի մի պարսկական երկրաչափ քաղաքում, ուր երեկոները, արեւ մտնելու պէս խախտութիւնը փակվում են և ամեն մարդ շտապում է մտնել իր տունը գողերի ու աւազակների բաժին չը լինելու համար, ոտնիկանութիւն չը կայ: Գրան փոխարինում է գաւառապետի և վերահսկողի (преставитель) ներկայութիւնը: Ուստիկանութիւն եղել է սրանից մի քանի տարի առաջ, Այժմ կայ և մի հաշտարար դատարան: Հասարակական հիմնարկութիւնների բացակայութեան մէջ ամենին չը պէտք է կանխածել: Հիւրանոցների փոխարէն կան քանի մի կեղտոտ քարվանսարաններ, որոնց զանազան անկիւններ

կանտոն, ինքը վկայում է, օրինակ բերելով մի կալմիկի գիւղ, ուր 1874 թ. յիսուն ընտանիքից կենդանի մնաց միայն մէկը: և մի և նոյն տարվայ մէջ նոյն հիւանդութիւնով մեռան երորդ մասը բոլոր կալմիկ բնակիչներին: Այդ թւանշանը — ասում է նոյն հեղինակը — պէտք է համարել չափազանց կալմիկների անապատի ամբողջ բնակիչների վերաբերութեամբ, բայց նա կարող է լինել ճշմարիտ այն սահմանների վերաբերութեամբ, ուր հիւանդութիւնը, ուսանների հետ զբաղութեան պատճառով, կատաղաբար ներգործում է առհասարակ աւելի մեծ չափով, քան անապատի խորքերում, որոնք հետև են ուստներից:

Յիշեալ պայմաններում, մահացութիւնը այնքան մեծ է լինում, որ 164 աւատարկացի աշակերտներից, որ գտնվում էին Տրեքիլեաի դըպրոցում, չորս տարուց յետոյ միայն կենդանի մնացին հինգ հոգի: Ներքերը, որ յայտնի են իրանց զարմանալի տոկոսութեամբ ջերմաստանական հիւանդութիւնների վերաբերութեամբ, խիստ շուտով հիւանդանում են բարակացաւով: Ներքերի 1800 հոգուց բաղկացած մի գունդ, որ բերված էր Ջիբրալտարում Անտիլիան կղզիներից, համարեա բոլորն ոչնչացան յիշեալ ցարից տասն և հինգ ամսվայ մէջ:

Կրթեալ ազգերի տպաւորութիւնը նախնական մարդիկների հետ, բացի յառաջացնելը վերջինների մէջ զանազան տեսակ վարակիչ հիւանդութիւններ, մեծ ներգործութիւն է անում նրանց անհետկութեան վրա: Մի քանի հեղինակներ ստեղծվիչների, մարդիկների, ինդիացիների և ուրիշ շատ վայրենիների ոչնչանալը վերաբերում են նրանց կանանց անպտղաբերութեանը, որ իբր թէ յառաջ եկաւ եւրոպացիների նրանց կողմերում յայտնվելուց յետոյ: Գրասիօէ արաւ մի համեմատութիւն նախնական կանանց անպտղաբերութեան և շատ անասունների անձնադարբերութեան մէջ, որ պահվում են անաղատութեան մէջ փակված: Նա բացատրում է այդ հետեւալ կերպով. «Այսինքն, որի երկիրը բոլորն է եւրոպացիներով, այլ ևս չէ գտնւում իրան իր տան մէջ: — և թէ նա մեռնում է իր հայրենի հողի վրա, բայց նա գտնւում է տէրութիւն հայ-

րից դնում են, իսկ պարսկական ճաշակով չի նված գիւղեթաւոր ծածկերի տակ, ուր մութ խառնութիւններում ծալապատիկ նստած են կարմիր երկայն մորուքաւոր մաշակները և սպասում են մուշտաբուն: Գրանցից մի քանիսը արեգակի աղտոտ լուսով, որ հազիւ ներս է թափանցում փոքր հերթիկների, տեսնում եւ դուրանը կամ մի այլ կրօնական գիրք բաց արած, գլուխը բարձր ու ցածր անելով կարդում են ջերմեռանդութեամբ:

Զանազան ու բազմաճանաչ սեղանատոմարներ փոխարինում են այստեղ քեաբաբիւնանները, որոնցից բարձրացած հոտը գրաւում է քաղցածներին և զղկեցնում է կուշտերին:

Պարսիկը կարծում է, որ ինքն բաւական առաջ է գնացել արհեստի մէջ: Եւրոպայի պատուական կաշուեղէններ պատրաստելու գործարաններ փոխարէն, նա ունի երեւելի զարադիւններ: Իրանց արհեստի մէջ կատարելագործված կօշակարների փոխարէն նա հպարտանում է իր մաքրաւոր փրնաչիներով: Իր բոլոր չիններով (ներկայարներով) նա կամենում է համեմատվել եւրոպացի ներկարարների հետ: Իր կոպիտ զարդերներով նա չի համոզվի, որ ինքն չափազանց ստոր է Եւրոպայի զանազան մետաղեղէն պատրաստող գործարաններից: Միայն այս ևս պէտք է խոստովանվել, որ մի քանի ձեռագործները իրանց նրբութեամբ բաւական բարձր զին ունեն: Պատուական ծաղկեկար գործված սեղանի սփռոցները արժեն մէկը 20 — 30 ռուբլ: Թամբերի համար գործված գեղեցիկ զարդերը նոյնպէս ունեն իրանց բարձր գները: — Նուիրն արդիւնաբերութիւնների մէջ երեւել է մետաքսը, որ արտադրվում է գաւառից 15 — 20 փթի չափ, Բոժոժը 35 ռուբլ գին ունի, լաւը 2 — 3 ռուբլ: Մետաքսից թելը քաշելու համար այժմ կայ մի գործարան, *) որի մէջ առաջ, ինչպէս պատմում են, մօտ 800 գործարաններ են եղել: Իսկ այժմ 100-ի հազիւ է հասնում: Ընդհանրապէս այսպիսի բաղդին են արժանանում մեղ մօտ ամեն տեսակ գործարանները... Մենք չենք մեղաւոր... Նուիրն արտադրում է նոյնպէս ցորեն և բրինձ: Մօտակայ անտառներից առատաբար որսվում է չափաւ, աղուէս, երբեմն

*) Միրզոբիկներ:

րենիքի մասին: Նա աշխատում է գինիի մէջ խեղդել իր սրտի ցաւը, բայց սթափվելուց յետոյ կրկին ընկնում է նոր ցաւի մէջ: Նա տխուր է լինում և աշխույժ մեռած, և տանջվում է, որպէս արդիւնք մէջ պահված անասուն: Անաղատութեան տխրութիւնը բաւական է նրա համար, որ պատճառ է անպտղաբերութեան, որպէս անասունների մեծ մասի մէջ: Շունը, որ միշտ պահվում է վանդակի մէջ, կորցնում է ամեն սեռական յօժարութիւն: Այսպիսի մի պատճառ հեշտ կարող է բացատրել Պօլինիս գիւղի և Աւստրալիայի վայրենիների անպտղաբերութիւնը: Նոր ժամանակներում դրա նման մի միտք սկսեց արծարծել Գարվինը, որը որպէս մենք տեսնեց վերևում, անպտղաբերութիւնը համարում է մինը ամենազլաւոր պատճառներից նախնական ժողովուրդների սպաւելելու: Նա, ճշմարիտ է, չէ բացատրում այդ միտքը այն հոգեբանական սկզբնապատճառներով, որոնց վրա հիմնվում է Գրասիօէ, բայց բաւականանում է միայն մանրամասն ապացոյցներով, համեմատելով եւրոպացոց ձեռքի տակ ձնչված նախնական ժողովուրդների անպտղաբերութիւնը շատ վայրենի անասունների նոյն օրինակ անձնաղականութեան հետ, որոնց աշխատում են զարմնել դէպի ընտանիքը գրութիւն: *)

Պատճառները, որոնք ազդում են պտղաբերութիւնը տկարացնելու, թէ նա ընդհատական օրէնքներով ճիշդ բացատրված չեն, այսու ամենայնիւ դա մի երեւոյթ է, որ յայտնվում է նախնական ազգերի մէջ, երբ նրանց կենցաղավարութեան սովորական պայմանները փոփոխվում են, և Գարվինը այդ համարում է բաւական բացատրելու համար մանուկների տկար մարմնակազմութիւնը, որոնք ծնվում են նոյն հանդամանքների մէջ, և որից հետևում է նրանց սաստիկ մահացութիւնը:

Մարմնակազմական յատկութիւնների նշանակութիւնը գոյութեան կոչի մէջ լաւ կը ելուր:

*) Այդ միտքը պէտք է չփոխել մեր վերևում յայտնած ընտանի անասունների անհամեմատ մեծ չափով անհետկութեան հետ, որովհետեւ նրանք այդ աստիճանին հասել են դարերի ընթացքում և բազմաթիւ զոհերի դնով:

արջ, որոնց մորթիները առօրեայ կեանքում միշտ հարկաւորվում են:

Հայերի եկեղեցիները երկու են. իսկ մահ մետականների մղկիթները շատ: Իրանց միւսաբէթներից օրվայ օրոյ ժամերում մօլլան սուր ու երկայն ձայնով փառաբանում է Ալլահին: Ալլահին փառաբանութիւն մատուցանողները շատ են: Պարսիկը ամեն մի ձեռնարկութեան մէջ «Եա Ալլահ» է ասում ու ընկնում գործի մէջ: Ամառվայ չոք ժամանակին, պարսիկը սառը ջուր բաժանելիս «Եա Աբբաս-Ալի» է օգնութիւն կանչում: Բայց նա պատրաստ է պղծել ամեն մի սուրբ, նուիրական բան, վրդովել իր ընտանեկան կեանքի հանգստութիւնը, կեղծել խաբել, սպանել, կոտորել ու ոչնչացնել... Այս էլ պարսկական բարոյականութիւն է:

Յովհաննէս-Հեթում

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Վ. Ագուլիս 25 հոկտեմբերի

Ուղարկում եմ ձեզ մի յօդուած «Մարդը գոյութեան կոչի մէջ» վերնագրով, — դրանով, յոյս ունեւ, մասամբ կը պարզվի մեզ ամենիս զբաղացնող հարցը, թէ ինչ վիճակ է սպասում տաճկական Հայաստանի հայերին Թուրքիայի այժմեան քաղաքական փոփոխութիւններից յետոյ, և թէ մրցութեան մէջ նրանք ինչ դեր կարող են խաղալ անգլիացիների հետ զարկվելով: — և որ ամենազլաւորն է, ինչ գէնքեր, ինչ պատրաստութիւն պիտի ունենայ Թուրքիայի հայը, որ չընկնի գոյութեան կոչի մէջ:

Ինձ շատ ցաւալի էր հետազօտել մեր ազգի պատմական կեանքը և գոնէ համառօտ կերպով ցոյց տալ, թէ ինչ դեր է խաղացել նա մինչև այժմ գոյութեան կոչի մէջ, բայց ցաւում եմ, որ ինձ պակասում են այն պատմական գրքերը, որ հարկաւոր են մի այնպիսի աշխատութեան համար: Ուրեմն այդ կը մնայ մի յարմար ժամանակի:

Մէլիքզադէ:

համար, հարկաւոր է դարձնել ընթերցողի ու շարունակել նոյն երեւոյթների վրա եւրոպական ազգերի տարածման վերաբերութեամբ, որոնք առհասարակ նշանաւոր են, իրանց առանձին տոկոսութեամբ, և բացի դրանից ունեն ձեռքի տակ կրթութեան շնորհիւ ընդարձակ միջոցներ իրանց կեանքը պահպանելու համար արտաքին շնաստակար պայմաններից: Օրինակ, Մագազասկայի վրա և Սենեգամբիայում ոչ մի եւրոպական ժողովուրդ ցոյց չը տուեց ընդունակութիւն տեղային կլիմային յարմարվելու: Չաւայի վրա, և առհասարակ Մալայեան Արշիպելագոսի կղզիներում, չը նայելով հոլանդացիների բոլոր աշխատութեանը, նրանց չը յաջողվեցաւ յարմարվել տեղային պայմանների հետ: Մինչև անգամ Ավիւրում, չը նայելով նրա բաւական նմանութեանը հարաւային Եւրոպային, եւրոպացոց մեծ մասը մեռնում է, միայն մի քանիսներին, որպէս են անլուրացիք և սպանիացիք, յաջողվեցաւ սովորել տեղային կլիմային:

Ուրեմն, ժողովուրդների թէ իրանց հայրենի երկրից արտաքաղվելու, թէ նոյն երկրի վրա մի ուրիշ ժողովուրդից սպաւելելու, և թէ առհասարակ աշխարհի զանազան կողմերում բնակվելու յարմարութիւն ունենալու մէջ հարկաւոր է գլխաւորապէս ի նկատի ունենալ նրանց բնաբանական (физиологический) յատկութիւնները, իրանց բոլոր բազմապիսի երեւոյթներով: Գրանով բացատրվում են, մի կողմից, այսպիսի ժողովուրդների սպաւելելու երեւոյթները, որոնք ուրիշ պայմաններում ցոյց էին տալիս բաւական կենդանութիւն, օրինակ, մարիսները, որ նշանաւոր էին իրանց երեւելի ընդունակութիւնով դէպի կրթութիւն, և իրանց յարմարվելով կեանքի հանգամանքների հետ, Բայց այդ բոլորը կորցրին նրանք, եւրոպացոց հետ զարկվելով: Միւս կողմից, մի և նոյն բնաբանական յատկութիւնները կարող են մեղ օգնել բացատրելու ժողովուրդների երկարակեցութեան շատ անգամ արտաքայ կարգի երեւոյթները:

(Կը չարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այս օրերս հասաւ մեր քաղաքը Մոսկվայում մշտապէս բնակվող մի յայտնի երաժիշտ, պրոֆէսոր Բ. առ. է. Բ., որ ամուսն է ցիտրա անուանված երաժշտական գործիքի վրա։ Նրա հետ միասին եկաւ մեր քաղաքը և մասնակցեցաւ է նրա կոնցերտներին պ. Շ. ու. մ. Բ., որ կարգում է զանազան բանաստեղծութիւններ։ Պ. Բ. առ. է. Բ. այս տարվայ հոկտեմբերի 13-ին ամեն լիովն դիպում Նորին Մեծնութեան կայսրի պալատում և մի ընծայ ստացաւ կայսրից։ Մոսկվայի նշանաւոր երաժիշտը այդ քաղաքի «Սլավոնական բաղադր» անուանված հիմնարկութեան ղեկավար է, որտեղ արվում են գրականական և երաժշտական երեկոները։ Պարոնները շուտով աւելան են մի կոնցերտ ֆիլիսոսոփ, բայց դեռ յայտնի չէ կրօնական թէ՛ Հայոց կրօնական Այդ մասին կը յայտնենք մեր ընթերցողներին։

Վրաց «Գրեթե» լրագիրը տպւել է մի չարք նամակներով Ալի գեղից, որոնցով մեղադրվում է Գաւիթ քահանայ Միթրաբեանը զանազան անկարգ վարմունքներով մէջ իր ծննդի հետ։ Հոգեւոր իշխանութիւնը քննութիւն է նշանակել և յոյս ունենք, որ եթէ իշխեալ քահանայի վրա դրած մեղադրանքները ճշմարիտ են, նա կը պատժվի։

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղ մի քանի երիտասարդներ մտադիր են հայ ներկայացուցիչներ տալ։ Ցանկալի կը լինէր, որ երիտասարդները հայ ողբերգութիւններ չը ներկայացնէին, այլ արդեան կեանքից վերցրած ինքնուրոյն կամ թարգմանված պիեսներ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌՍՏՐՈՒՆԳԱՐԻԱ

Բուդա—Պէշտից հոկտեմբերի 26-ից հաղորդում են լրագիրներին հետեւեալը։

Կայսրը բացեց պաշտօնապէս պարլամենտը պալատում գահական ճառով, որ կարգաց ինքը անձամբ։ Հանդէսը փառահեղ էր։ Պէշտը գտնէ առ ժամանակ ամենախմբութեան ու մայրաքաղաքի կերպարանը ստացաւ։ Օրը հիմնալի էր, առաւօտունից սկսված ժողովուրդը խումբ խումբ հաւաքվում էր փողոցներում։ Գետեգերքի վրա գտնվող աներից շատերը և մանաւանդ Գունայի վրայի կամուրջը, որ գտնվում է այն լեռան ստորոտում, որի վրա բարձրացած է վաղեմի Բուդապէսային ինքն պալատը, զարդարված էին դրօշակներով, որոնց մէջ ի հարկէ ոչ մի սև ու գեղին զոյնով չէր երևում, միայն այդ անսակ մի զրօշ փողոցում էր Բուդայի վրա ունգարական ու խորվաթական դրօշների մէջ, որը ամբողջ մէջ յարուցանում էր թունաւոր և միջև իսկ թշնամական նկատողութիւններ։ Գեո երեկ ամենքը կարգային լրագիրներում Գանիէլ Իրանի բողբոջ, որ Պէշտում գեղին ու սև զոյներով զրօշ երևալը յայտնի վիրաւորանք է ունգարացիներին ու մաճարներին, և այդ ամենքը շատ լաւ են յիշում։

Ի հարկէ ժողովրդի մեծ մասը այս տեսակ քաղաքականութեամբ չէր պարագած և անհոգութեամբ ու անկեղծութեամբ զուարճանում էր քաղաքի անսովոր հանդէսով։ Մարդոց և կանանց խումբեր ուրախ ուրախ դիմում էին դէպի Բուդա, կարծես թէ դրանց այնտեղ մի հարկաւոր գործ էր սպասում։

Մօտ տաս երկու ժամին պալատի առաջ գտնվող հրապարակը և պալատի ընդարձակ բազիլիկը ու պալատի ներքին լքվեցան մարդիկ։ Կամուրջի երկու ծայրին նոյնպէս հաւաքվել էր ժողովուրդը։ 11 ժամից սկսած գալիս էին հիմնալի լծուած կառքեր որոնց մէջ շատ քիչ էին գտնվում հասարակաց կառքեր, շարուկ շարուկ բարձրանում էին սարով և մագնաների ու պատգամաւորների փայլուն ու օսկեզօծ զգեստները շողջողում էին

արեգակի առաջ։ Կարող էք ձեզ երեւակայել այդ պարոնները բոլորն էլ տեղական զգեստներ էին հագել, պոչազգեստներին (Фарсы) մատով կարել էր համարել և դրանք էլ ենթարկվում էին ժողովրդի մեծ մասի ծիծաղին։ Այս բոլորը մի հիմնալի և հետաքրքիր տեսարան էր ներկայացնում, բայց ամենից հետաքրքիրը մագնաների և ուրիշ երեւելի ներկայացուցիչների խումբերն էին։ Նրանց վրա այնչափ ոյժ, արժանաւորութիւն և այնչափ ինքնահաւանութիւն էր երևում, որ կարծես դրանք ճշմարիտ աշխարհիս տիրապետողներ լինէին։

Մօտ 12 ժամին ամենքը հաւաքվեցան մեծ դահլիճում, իսկ ուղիղ 12-ին երեւեցաւ և ինքը կայսրը, ամենքը միաձայն կոչում էին, «Ելլէն»։ Նորին մեծնութիւնը նստեց գահի վրա և կարգաց իր ճառը, այդ ճառը կարճ և չէ կարելի ասել որ հետաքրքիր է, բայց և այնպէս դա մի տպաւորութիւն գործեց, բայց թէ ինչ տեսակ տպաւորութիւն, դուք այդ կարող էք ձեզ երեւակայել նրանով, որ բոլոր կարգաւ ժամանակ չլրան միայն մի անգամ ընդհատեցին «Ելլէն» աղաղակով, իսկ ճառից յետոյ այլ ևս բնաւ «Ելլէն» չը լսուեցաւ։

Պարզ է որ ճառը վատ տպաւորութիւն գործեց։

Առհասարակ այդ ճառով կայսրը կամենում էր ասել որ արտաքին գործերի միևնույն տրը ամենակարճ միջոցում հաշիւ կը ներկայացնէ արեւելեան քաղաքականութեան և գրաւելու մասին դրա համար նշանակված առանձին մասնագիտը, ուրեմն այդ գործը մասնագիտի գործ է, իսկ պարլամենտը դրա մէջ խառնվելու գործ չունի։

Պատգամաւորներին այդ աւելի ևս դուր չեկաւ, որովհետեւ նրանք վաճառ էին որ անպատճառ բացատրութիւն պահանջին արտաքին քաղաքականութեան մասին առաջ թէ կը կազմվէր մասնագիտը։ Անշուշտ գահական ճառի արտայայտութիւնները չեն արգելել նրանց կատարել իրանց դիտարկումները, սակայն այդ ցոյց է տալի կայսրի ցանկութիւնը, որ նա կամենում է նրանց վրա բարոյական ճշնունք գործել։

Ինչպէս և իցէ հանգէսը յաջող վերջացաւ, թէպէտ և ընդդիմաբանութիւնը այնու ամենայնիւ յայտնեց իրան ձախակողմեանների բազմաթիւ անդամների բացակայութեամբ։ Ամբողջ փողոցում կանչում էր «Ելլէն» և առհասարակ համակրական նշաններին պատկաւութիւն չը կար, մանաւանդ դուք Յովսէփի վերաբերմամբ, որ ներկայացել էր մագնաների թիւում և տեղական զգեստով իրրեւ նշանաւոր մեծ կալուածատէր։

Նա ներկայացնում է իրանով մաճարացած Հաբսբուրգը։ Արմատակները, որոնք ձգտում են բաժանվել Աւստրիայից՝ նրա և նրա յաջորդների մէջ տեսնում են սուրբ Ստեփանը, այսինքն այժմեան կառավարութեան կուսակցութիւնը կամ Տիսսայի կուսակցութիւնը որ ձգտում է մաճարացիներին Աւստրիայի բոլոր ոչ մաճար աղքատներին և կառավարել կայսրութեան երկու մասերի էլ քաղաքականութիւնը, յարմարվելով իրանց սեփական մաճարական և հակասական նպատակներին, օգտվում են դուք Յովսէփի հաւատարմութեամբ իրրեւ առարկայ իրանց աղքատի զգացմունքները արտայայտելու։

Իսկ Հաբսբուրգից դրան գործ են դնում իրրեւ պատրուակ մաճարների համար իրրեւ ջերմ ապացոյց իրանց դէպի նրան ունեցած անփոփոխ սիրուն։ Եւ թէ միացեալ հակառակութեան ներկայացուցչի Դանիէլ Իրանի բողբոջ թէ փողոցային «Ելլէն» աղաղակի համակրական արտայայտութիւնները, այս բոլորը խիստ կերպով մտածած է, ամեն բան եղած է դիտմամբ, բաղադրված

կազմված է ունգարական ընդհանուր սխտեմայով։

Ունգարական կուսակցութեան գլխաւորը և պարագլուխը իսկապէս Անդրաշին չէ, — Անդրաշին միայն փայլուն պատրուակի զէնք է, այլ Տիսսան է իր մտերիմ բարեկամների մի փոքրիկ խմբով։

Ինչք է ճարպիկ Տիսսան վաղուց արդէն հասկացել էր այն պարզ իրողութիւնը, որ չը նայելով իր ակնհեւութեանը շատ քիչներ էին հասկանում նա իմացաւ որ Հաբսբուրգի միակեանութիւնը ոչ ներքին և ոչ արտաքին քաղաքականութիւն ունի, այլ նա ունի միայն ցեղական քաղաքականութիւն։

Այդ հասկանալուց յետոյ նա բոլոր իր ուշադրութիւնը, բոլոր ջանքերը դարձրեց բացառապէս միայն այն մարդու վրա, որին այդ քաղաքականութիւնը ամենից մօտ և որից կախումն ունէր սլավոնասէր և ռուսօփիլ դուք Սլեբընկովի վրա։

Նրա գործողութեան կերպը կայանում է հետեւեալ բանում։ Մի կողմից պահել նրան անդադար ունգարական յեղափոխութեան երկիւղի մէջ և այդ հինգ այն ճգնաժամին երբ միակեանութեան հարկաւոր են բոլոր իր յոյժերը և երկրի կատարեալ խաղաղութիւնը։ Միւս կողմից սիրոյ և անձնանուիրութեան արտայայտութիւններով համոզել նոյն այս ցեղին որ ունգարացիները գերմանացիների և սլավոնացիների նման չունենալով ուրիշ ազգային և ցեղական կենտրոն, որին նրանք կարողանային ձգտել, ներկայացնում են միակ ճշմարիտ յոյս և միակ հաստատ նեցուկ Հաբսբուրգից համար։ Այսպէս միջոցներով Տիսսա պահպանում է իր ազդեցութիւնը և վարվում է ինքնիշխան, այնտեղ որտեղ նա միայն շատ երկրորդական դեր պէտք է խաղար։

Ասել թէ այդ չը գիտեն նրանք, որոնց հարկ է դիտեալ, անարդարութիւն կը լինէր։ Նրանք գիտեն — գիտեն, բայց այնու ամենայնիւ թողնում են, որ վարուեն իրանց հետ ինչպէս կամենան երկիւղ կրելով մի ճգնաժամից։

Վիեննայի թշուառութիւնը այն է՝ որ նա թոյլ է տուել բոլոր իր որ և է նշանաւոր և ազդեցութիւն ունեցող տեղերը ունգարացիք զբաւենին։ Աւելի ևս մեծ թշուառութիւնը այն է, որ նա թոյլ է տուել որ գրեթէ իր ամբողջ մամուլը հրէաների ձեռքը ընկնի, հրէաների, որոնք հոգով և մարմնով նուիրված են ունգարականութեան։

Ունգարիայի պարլամենտի կայսրի ձեռքով բացվելու պատճառն այն է, որ այնտեղ նոր ժողովք է նոր պատգամաւորներով և ընտրութիւններից յետոյ։ Բայց այս պաշտօնական բացատրութիւնը միայն նրա համար է անվում, որ ծածկէ մի բուռը ունգարացիների առաջ խնարհվելու ամբթը։

Եւ իրանք ունգարացիները և գերմանացիները շատ լաւ գիտեն թէ բանը ինչու է։ Ունգարացիները, բնականապէս բարձրացրին զուգնները և այժմ նրանք դարձեալ հանգամանքների տէր են։ Տիսսա դարձեալ մեծացաւ նրանց աչքում, նրա ազդեցութիւնը ամբողջաւ պարլամենտում ինչպէս և «Թագի խորհուրդում» և ոչ ոք էլ չէ կասկածում, որ նա առաջուայ պէս դարձեալ նախագահ միևնույն կը մնայ։

Տիսսա նախագահ միևնույն է Պէշտում — այդ կը նշանակէ հակասութեան քաղաքականութիւն է Վիեննայում։ Ուրեմն և դաշնակցութիւն Ռուսաստանի հետ ոչ մի ժամանակ յուսալ չէ կարելի, հետեւաբար այն սլավոնացիները, որոնք ձեռքի տակ են գրանցվում կաշխատեն նրանց աւելի ճշնունք։ Նոյն իսկ գահական ճառի կարգաւորը, Տիսսա երևան եկաւ ազատամիտների կրօնում և այդտեղ մի ճառ կարգաց, որը եթէ կարելի է այսպէս ասել գահական ճառի լեզու է։ Այդ ճառը, որի իւրաքանչիւր խօսքից երևում է ատեւութիւն և թշնամա-

կանութիւն դէպի սլավոնականութիւն և դէպի Ռուսաստան, այնպիսի ազդեցութիւն գործեց, որ դեռ կրօնի անգամ չեղող նոր պատգամաւորներ իսկոյն սկսեցին տասնեակներով անդամ գրվել այնպէս կրօնը բացառապէս կազմված է Տիսսայի կուսակցիցներից։ Մինչև անգամ դա կոչվում է «Ազատամիտների կուսակցութեան կրօն»։

Անգամ գրվել այդ կրօնի, կը նշանակէ Տիսսայի կուսակցութեան պատկանող ցոյց տալ։ Նրա կուսակցութիւնը այդ երեկոյ 43 ձայներով աւելցաւ որ փոքր բան չէ։ Այժմ նա կարող է հանգիստ և ճշմարիտ և ոչ միայն երեսանց պանծալ։ Նրա դրութիւնը իբրեւ միևնույն արդէն ապահովված է, դրա հետ էլ ապահովված է Գերմանիայի և ունգարացիների շարունակութիւնը, և ապագայ սլավոնական ճշնունքը Կոզովի արդեօք դրանից դիմատախան — այդ ուրիշ հարց է։

ԿԻՊՐՈՍ ԿՂՁԻ

«Օրերում», գրում է լրագիրներից մէկի թղթակիցը, ես ներկայ էի Վիպրոս կղզու պօլիցիական դատաստանի նստին։ Այդ դատարանը այժմ անգլիական հսկողութեան տակ է գտնվում։ Դատարանի անգլիացի նախագահը առանձին եռանդով աշխատում է։ Դատարանի թիւքը անդամները կամայ ակամայ պէտք է հետեւեն նրա օրինակին և թողնեն իրանց սովորական անտարբերութիւնը։ Դատաստանովարութեան ձեւը զանազանվում էր առաջվանից իր արագութեամբ։ Այս անգամ կազին շուտ եկաւ որ, առաջ չէր լինում Այդ նիստին քննվում էր ակամայ սպանութեան մի գործ։ Մի տասն և հինգ տարեկան երեխայ խփել էր միւսի կողքին և այնքան անզգոյշ, որ երկրորդ երեխան մեռել է։ Նախագահը պատուիրեց կարգաւ վիաների ցուցմունքները, որոնք հաստատեցին անցքի իսկութիւնը։ Յետոյ գտան մի օրէնք, որի համեմատ յանցաւորը ակամայ սպանութեան մէջ ենթարկվում է վեց ամիս բանտարկութեան։ Դատարանի երեք յոյն և երկու թիւքը անգլիացիներ կամեցան հեռանալ և գործը քննել ազատ ժամանակ, որ մի քանի օր կը տևէր, բայց անգլիացի նախագահը թոյլ չը տուեց և պահանջեց, որ իսկոյն վճիռ կայացնեն։ Դատարանի անդամները ստիպված էին ենթարկվել նախագահի կարգադրութեան և նոքա մի քանի օրակների ընթացքում վճիռ կայացրին, որի համեմատ յանցաւորը ենթարկվեցաւ վեց ամսվայ բանտարկութեանը։ Դործը այդպիսով վերջացաւ և նախագահը կամեցաւ էր սկսել միւսի քննութիւնը, բայց կարդին մուսացել էր հրապարակ վիաներին։

«Ստիպված էին նիստը յետաձգել։

Բելուսուր դժուարութիւնը դատաստանավարութեան ժամանակ նախագահի լեղուի չիմանալն էր։ Նա չը գիտէր ոչ յունարէն և ոչ թիւքերէն, իսկ թարգմանը նոյնպէս լաւ չէր տիրապետում այդ լեզուները։ Թիւք թարգմանները լաւ լինեն գործը շատ աջողակ կերթայ։ Անգլիացիները կարող են աջողութեամբ կառավարել Վիպրոսի դատաստանավարութիւնը։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԲԵՐԼԻՆ, 1/13 Նոյեմբերի։ Կայսրիցի համարարանը զգլից ակադեմիական քաղաքացիութեան իրաւունքներից ռուս ուսանողներին, որոնք մեղադրված են սօցիալական քարոզների մէջ։

ՊԵՏԸ, 1/13 Նոյեմբերի։ Այստեղ հասաւ կոմս Գովալով և երկու ժամանակ խորհրդակցում էր կոմս Անդրաշին հետ։ ՎԻԵՆՆԱ, 1/13 Նոյեմբերի։ Միթհագր-փաշայի Սիրիայի նահանգապետ նշանակվելը համարվում է Կայսրի յաղթութիւն։

